

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

Միջազգային տնտեսական հարաբերությունները տնտեսագիտության կարևոր, չափազանց արդիական և դինամիկ զարգացող բնագավառներից է, որը բնութագրվում է ուսումնասիրվող գլոբալ հիմնախնդիրների, դրանց ծավալի և բովանդակության էական տարբերություններով, աշխարհաքաղաքական զարգացումների և դրանցում յուրաքանչյուր ազգային տնտեսության տեղի և դերի կարևորման առանձնահատկություններով:

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» (International Economic Relations) կրթական ծրագիրը մշակվել է «Տնտեսագիտություն» մասնագիտության շրջանակներում մագիստրոսի որակավորման աստիճանով մասնագետների պատրաստման համար:

Կրթական ծրագրի նպատակը միջազգային տնտեսական բազմաբնույթ հարաբերությունների բնագավառի բարձր որակավորում, լայն մտահորիզոն և աշխարհայացք, տնտեսագիտական մտածողություն ունեցող մասնագետների պատրաստումն է, գլոբալացման և տարածաշրջանային ինտեգրման խորացման պայմաններում առևտրատնտեսական քաղաքականության, արտադրության գործոնների միջազգային շարժի, միջազգային արժույթաֆինանսական հարաբերությունների և արտաքին տնտեսական կապերի այլ ոլորտներում հետազոտությունների իրականացման հետ կապված խնդիրների լուծումը ու դրանց կիրառման ուղիների բացահայտումը:

Կրթական ծրագրի շրջանավարտներին շնորհվում է «Տնտեսագիտության մագիստրոսի» որակավորում:

Ծրագրի տևողությունը 1,5 տարի է, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ: Մասնագիտական դասընթացներից հետո մագիստրոսը համապատասխան փորձառություն է անցնում պետական և մասնավոր հատվածների գործատու կազմակերպություններում՝ ծանոթանալով դասընթացների շրջանակներում ուսումնասիրված նյութի գործնական կիրառական ասպեկտների հետ:

Ծրագրի շրջանակներում դասավանդումը կիրականացվի համալսարանի լավագույն դասախոսների և ոլորտի փորձառու մասնագետների ներգրավմամբ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման համար ՀՊՏՀ-ն ապահովված է անհրաժեշտ ենթակառուցվածքներով, տեխնոլոգիական հնարավորություններով, գրադարանային և ուսումնական ռեսուրսներով:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիր

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի շրջանավարտները հետազոտում են համաշխարհային ապրանքային շուկաների պայմաններն ու գների տատանումները, արտաքին տնտեսական գործառնությունների իրականացման մեթոդներն ու գործիքները, արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները՝ կապված մաքսային ընթացակարգերի և միջազգային արժույթաֆինանսական գործառնությունների իրականացման հետ, ինչպես նաև հմտություններ են ձեռք բերում միջազգային առևտրի կազմակերպման ու կարգավորման, տարածաշրջանային ինտեգրման գործընթացների վերաբերյալ:

Մագիստրոսի կրթական ծրագիրը թույլ է տալիս ինչպես տեսական, այնպես էլ գիտագործնական տեսանկյունից ուսումնասիրել արտաքին տնտեսական քաղաքականության իրագործման ընթացքում կիրառվող ժամանակակից ողջ գործիքակազմը, դրանց գործողության մեխանիզմները, բացահայտել այն առանձնահատկությունները, օրինաչափությունները և միտումները, որոնք կապված են արտաքին առևտրի պետական և միջազգային կարգավորման, առևտրային կազմակերպությունների կողմից գործարարության կազմակերպման և վարման, արտադրության գործոնների միջազգային շարժի գնահատման, միջազգային արժույթաֆինանսական հարաբերությունների կարգավորման, ինտեգրացիոն գործընթացներում երկրի տեղի և դերի որոշման, ինչպես նաև ձեռնարկատիրության և պետական կառավարման մարմինների միջև փոխադարձաբար ընդունելի որոշումների կայացման հետ:

Դասավանդումն իրականացվելու է բացառապես ուսանողակենտրոն սկզբունքով, որտեղ կիրառվելու են այնպիսի ուսումնառության մեթոդներ, ինչպիսիք են բանավեճը (Debate), ուղեղային գրոհները (Brainstorm), օրինակների հիման վրա դասավանդումը (Case study) և այլն:

Աշխատանքի հնարավորություններ

Ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել տնտեսագետի, տնտեսագետ-վերլուծաբանի, տնտեսագետ փորձագետի, հետազոտողի, առաջատար և գլխավոր մասնագետի և այլ պաշտոններ, մաքսային ծառայության և հարկային ծառայության պաշտոններ՝ պետական կառավարման մարմիններում, նախարարություններում և գերատեսչություններում, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ տնտեսական մրցակցության ապահովման հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի աշխատակազմերում, ֆինանսական հատվածի կազմակերպություններում, այդ թվում՝ առևտրային բանկերում, արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող արտադրական ձեռնարկություններում, տնտեսության ճյուղերի տարբեր մասնավոր ընկերություններում,

արտաքին տնտեսական գործունեության խորհրդատվական ընկերություններում, հետազոտական կենտրոններում, հասարակական կազմակերպություններում, կրթական հաստատություններում և միջազգային կազմակերպություններում, մասնավորապես՝ որպես տնտեսագետ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Միավորված ազգերի կազմակերպության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Եվրասիական զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ կազմակերպությունների ներկայացուցչություններում: